№ 188 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 1907 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 № 188

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական ցրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ. մէկ ամսվանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նինա Ղազարոսեան և Պետրոս Բալլուեան Յակովբեանցները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին, առաջինը իր սիրելի հօր և երկրորդը իր անմոռանալի աներոջ՝

Ղազարոս քահանայ Բաղդասարեան

ՊԱՀԼԱՒՈՒՆՈՒ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 17-ին։ Ամբիծքը կը կատարվի այսօր, դեկտեմբերի 20-ին, ժամը 6-ին երեկոյեան։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ դէպի կայարանը ուրբաթ, ամսիս 21-ին, ժամը 12-ին իր բնակարանից (Гановская 18), իսկ թաղումը լինելու է Աբասթումանի եկեղեցու գաւթում 23-ին։

(հ. ու.) 2—2

№ 101 ՍԵՂԱՆԻ ՕՂԻ № 101 № 101

ԵՂԲ. ՍԵՍԻ ԷՎՆԵՐ ԵՒ ԸՆԿ.

(Թիֆլիս, Վօկզալնայա փող., տուն № 6, հեռ. № 197.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍԸ

Բացի յայտնի և շնորհիւ իրանց յատկութեան և գերազանցութեան ընդարձակ տարածում ձեռք բերած ի դիմաց Անդրկովկասի միւս ֆիրմաների պատրաստած օղիների, «Желѣзнодорожное», «Столовое № 50» «Флотское» կոչված հացի սովորական օղիներից, ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ յայտնում է ի գիտութիւն յարգելի պ. պ. գնողների և սպառողների, որ առաջիկայ տօներին ֆիրման բաց է թողել մինչև օրս եղածների լաւագոյն, ՋՏՎԱԾ ՍՊԻՐՏԻՑ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՄԱՔՐԱԾ, ՍԵՂԱՆԻ ՀԱՑԻ ՕՂԻ «Столовое вино № 101» անունով. (վերին աստիճանի հաճելի հոտով և համով)։ Այս օղին ֆիրման յատկապէս առաջարկում է և խնդրում է պահանջել նրան ամենուրեք։

Օտարաքաղաքացի գնողները թող բարեհաճեն պատուէրները ուղարկել առևտրական տան անունով կամ յանձնել ձեռական լիազօրութիւններ ունեցող հաւատարմատարներին։

(դ. 21, 28, յ. 4) 1—3

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ.

ԱԼԹՎԱՆԳ

Պատրաստ սպիտակեղէնի և օժիտեղէնի

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ

Տօների համար ստացված են

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

գեղեցիկ սպիտակեղէն, վզնոցներ, ժանձէռներ, փողպատներ (գալստուկ), բլուզներ և կանանց առաւօտեան զգեստներ (պենուարներ)։

ՀԵՌԱԽՕՍ 477, 555.

10—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտակից մասսաներ. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Առաջին Դուման դատարանի առաջ. Պետական Դումայի շուրջը Մեր քաղաքական գործերից. Սմիրնովի դասախօսութիւնը սկսու մասին. Հայկական կլուբում. Թատրոն և երաժշտութիւն. Ո՞վ է կատարում քահանայացուի ընտրութիւնը. Տեղեկութիւններ դաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Դաշնակցութիւնը միջազգային սոցիալիստական կօնգրէսում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՕԱՂՈՒԱԾՔՆԵՐ. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳԻՏԱԿԻՑ ՄԱՍՍԱՆԵՐ

I

Մեր առաջ անցան այս վերջին տարիները հայի քաջութեան մի շարք տեսարաններ։ Մենք տեսանք հային անձնուէր, քաջամարտիկ, համարձակ, ինքնազոհ։

Բայց ցաւ է ասել, որ հէնց միևնոյն ժամանակ պարզվեց մեզ համար հայի ստրկութեան մի սարսափելի պատկեր։ Քաջութեան դէպքերի փայլուն ճաճանչների ետևին ձգված էին ստրկութեան ամեհի ստուէրներ։ Համարձակ և վստահօրէն գործող հերոսների շըրջավայրում կանգնած էին երկչոտ, երերուն և ստրկացած ոգիների անվերջ շարքեր։

Եւ եթէ առանձին դէպքերը հերոսական ոգու արտայայտութիւններով կարող էին հրճուանք պատճառել մարդկանց և հմայք ազդել նրանց վրա, դրա հանդէպ ընդհանուր էութիւնը անմխիթարական էր և իրերի բնաւորութիւնը բացասական։

Հերոսների շուրջը կանգնած բազմութիւնը ինքնուրոյն ոգիների համախմբում չէր և գիտակից ոյժերի զինուորութիւն չէր, այլ անպաշտպան մի ամբոխ, որ շշմել էր կեանքի ծանր փորձութիւններից և գնում էր հրամայողների ետևից։

Երէկ նա սնխօս և հլու լսում էր գիւղական տանուտէրի ու գզիրի հրամանները, ոստիկանական ներկայացուցչի կարգադրութիւնները, տեղական զօրեղների, վաշխառուների և ամեն տեսակ ազդեցիկների թելադրութիւնները, այսօր նա նոյնպէս ենթակայ է նոր զօրեղների և օրվայ հրամանատարների պատուէրներին։

Նա երէկ չէր համարձակվում քննադատել իր մերձաւոր վարչական գործոնները, իր դատաւորներին, վաշխառուներին և ամեն տեսակ ազդեցիկներին, այսօր նա նոյնն է զանազան կարգադրիչների դիմաց, նա նոյնպէս չէ համարձակվում քննադատել, չէ վստահանում փորձ անել տնօրինելու իր կեանքը իր ցանկութեան համաձայն։

Եւ ընդարձակ տարածութիւնների ազգաբնակութիւնը հանդիսանում է մեր առաջ իբրև անխօս, խղճացած, ստրկացած մի բազմութիւն, որը տարուբերվում է այս ու այն ուժեղի շուրջը, չը կարողանալով տէր ու տնօրէն կանգնել իր գործերի և կարգադրիչ իր գործողութիւնների վրա։

Դա սարսափելի մի վիճակ է, որ ամենալուրջ հոգս պէտք է պատճառէ այն բոլոր անձերին, որոնց համար թանգ են ժողովրդի գիտակցութիւնը և ինքնագործունէութիւնը։

Ժողովրդի մէջ մտնող իւրաքանչիւր մի անհատ և խումբ աշխատում է ժողովրդին ծառայեցնել իր որոշ նպատակների համար, և եթէ նա արտաքուստ հասնում է իր դիտաւորութեանը՝ ուրախ և գոհ տօնում է իր յաղթութիւնը։

Բայց այդտեղ տօնելու ոչինչ չը կայ։

Իսկական տօնը այն ժամանակ կը գայ, երբ ժողովրդական մասսաները ոտք կը դնեն գիտակցական հողի վրա, կը սովորեն քննադատել, կիւրացնեն կուլտուրական շինարար գաղափարներ և ընդունակ կը լինեն հանդէս գալ իբրև քաղաքացիներ։

Դէն գցեցէք ստրուկի պատրաստակամութիւնը՝ անելու ամեն բան, ինչ որ դուք կը ստիպէք, և նրա տեղ ասպարէզ քաշեցէք ինքնուրոյն մտածող և իր գործերը ազատ վարող գիտակից ժողովուրդ։

Ահա ինչին պէտք է ձգտել։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետական առաջին Դումայի 169 պատգամաւորների դատը, որով նրանք մեղադրվում էին պետական յանցանքի մէջ Վիբորգում բաց թողած կոչի համար, ուղղված Ռուսաստանի ժողովրդին,—մի յանցանք, որի համար ամենամեծ պատիժը՝ 3 տարի ուղղիչ տան մէջ բանտարկելն է (և այդ պատիժը պահանջում էր մեղադրող պրոկուրորը), վերջացաւ, և առաջին Դումայի 167 պատգամաւորները իրանց նախագահ Մուրոմցեվի հետ միասին Պետերբուրգի դատաստանական պալատի առանձին ատեանի դատավճռով մեղաւոր են ճանաչված, ինչպէս հեռագրում է մեր թղթակիցը։ Մուրոմցեվ և միւս պատգամաւորները ենթարկված են նուազագոյն պատժի, այն է 3 ամսվայ բանտարկութեան։

Երկու հոգի՝ Ախտեամով և Դեաչենկո անպարտ են արձակված, որովհետև նրանց մասին ապացուցված չէ, թէ ստորագրել են կոչը։ Ինչպէս յայտնի է, այդ 167 պատգամաւորների թիւում կան և հայ պատգամաւորներ՝ Գեղամ Տէր-Պետրոսեան, բժիշկ Խաչատուր Բահաթրեան և բժշ. Այվազեան։ Նրանք ճանաչվում են մեղաւոր քրէական պատժագրքի 129-րդ յօդուածի 3-րդ կէտով և 51-րդ յօդուածով և քր. պատ. 52-րդ յօդուածով, և դատապարտվում են իւրաքանչիւրը երեք ամսով բանտարկութեան։

—

Պետերբուրգ.—Ընդհանուրի համոզմունքն այն է, որ երեք ամսով բանտարկութեան դատապարտվածներին ներումն կը շնորհվի, բոլորին էլ անխտիր։(«З.»)

—

Պետերբուրգ.—Սենատի վրճռաբեկ ատեանների ընդհանուր ժողովը, դեկտեմբերի 17-ին քննելով իսկական դաղտնի խորհրդական Դուրկօի հաւատարմատարի վճռաջինջ բողոքագիրը՝ սենատի քրէական ատեանի դատաստանական վարչութեան դատավճռի դէմ, որոշեց բողոքագիրը անհետևանք թողնել։

—

Կ. Պոլիս.—Գերմանական դեսպան Մարշալ ֆօն-Բիբէրշտէյնի մօտ դեսպանները մի ժողով ունեցան, ուր կազմվեց մի հաւաքական նոտա, որով եռանդուն կերպով պահանջվում է ընդլայնել այն անձանց լիազօրութիւնները, որոնց վրա պարտականութիւն է դրված գործադրել Մակեդոնիայի բարենորոգումները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴՈՒՄԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Դեկտեմբերի 12-ն է։ «Ժողովրդական ազատութի Դումայի» ամենալաւ ոյժերը, թիւով 169 հոգի, կանգնած են դատարանի առաջ։ Նրանք մեղադրվում են այն բանի համար, որ առաջին Դուման ցրելուց անմիջապէս յաջորդ օրը, գնալով Վիբորգ, իրանց վերջին խօսքով դիմեցին իրանց ուղարկող ժողովրդին։

Դատարանի կուլուարները արտասովոր կենդանութիւն են ստացել։ Լայնածաւալ Ռուսաստանի զանազան ծայրերից հաւաքվել են ժողովրդական առաջին ընտրեալները։ Այնտեղ են արծաթահեր հոգաբ Մուրոմցեվը, եղբ. Պետրունկեվիչները, Վ. Դ. Նաբոկովը, Պետրաժիցկին, իշ. Գ. Դ. Դոլգորուկովը, Շախովսկին, Ժիլկինը և մի քանի տասնեակ ժողովրդական թանգագին անուններ։

Մոայլ լուսաւորութեան և ծխախոտի ծխից թանձրացած օդի մէջ պատկերանում է մի ինչ-որ վաղաժամ խորտակված սիրելի բան։ Առաջին Դումայի միրաժը... Տաւրիկեան պալատի կուլուարներում չէինք գտնվում արդեօք։ Դարձեալ հաւաքվել են բազմաթիւ հանդիսականներ, ժուրնալիստներ։ Գալիս են և պաշտպանները։ Մի քանի մօսկվացիներ՝ Մուրավիով, Սախարով, Մանդելշտամ, Վարշավսկի։

— Դուք մեզ հետ բանտ էլ կը գաք,— դիմում է «I Դումայի մասին» գրքի հեղինակ Վարշավսկուն պատգամաւորներից մէկը։—Դուք մեր անդաւաճան ուղեկիցն էիք առաջին Դումայում, Վիբորգում, այժմ էլ դատարանում։

— Ի հարկէ կը գամ,—պատասխանում է պաշտպանը։

Ներկայ են բաւականաչափ տիկիններ, ինչպէս և՝ պատգամաւորների կանայքը, ազգականները, բարեկամները։ Եկել են և մի քանի պատանիներ, պատգամաւորների որդիները, որոնք գաւառներից եկել են լսելու, թէ ինչպէս են դատում իրանց հայրերին։ Աշխուժութիւն և վհհութիւն է փայլում նախընտրեալ պատգամաւորների դէմքերի վրա։

Նիստը նշանակված է ժամը 11-ին, բայց դատաւորները, ըստ սովորականին, չեն շտապում, և հաղիւ 12-ին ներս են հրաւիրում պատգամաւորներին։

Մեղադրեալները բռնում են իրանց տեղերը՝ այբուբենական կարգով, խառն ի խուռն. նախավերջին շարքում, դատաւորների դէմ առ դէմ, ձախակողմում նստում են իրար կողքի Մուրոմցեվն ու Նաբոկովը։ Նոյն շարքում՝ Պետրունկեվիչները, նրանց առջևի շարքում՝ Կեդրինը, Ն. Կովալեվսկին, Պետրաժիցկին, Դրեդեսկիւլը, իսկ աջ կողմում՝ Շախովսկին։ Մուրոմցեվի ձեռքին թղթերի ահագին կոյտ կայ. շնորհաւորական հեռագիրներ են նրանք՝ ստացված Ռուսաստանի ծայրերից։

Ինչպէս երբեմն Դումայում, այստեղ էլ շարքերով այս ու այն կողմ են անցնում ֆրակցիայի ներկայացուցիչները, խօսում են, պայմանաւորվում։

— Ահաւասիկ, նայեցէք,—յափշտակված խօսում է ժուրնալիստներից մէկը, որ մատնացոյց է երեք Դումաների բոլոր նիստերին.—ահաւասիկ հանգուցեալ Դուման. բայց նա աւելի է հետաքրքիր ու կենդանի, քան երրորդ կենդանի Դուման։ Եւ հասարակութիւնը այժմ աւելի շատ հետաքրքրվում է դրանով, քան երրորդ Դումայով։

Վերնասրահում ժուրնալիստների մօտ յայտնվում է նաև լուսանկարիչ Բուլլան, որը ուրախ ողջունում է այնտեղից պատգամաւորներին և ուղղում է իր ապարատը նրանց վրա։

Այդ միջոցին պահակների հսկողութեամբ ներս են բերում Բամիշվիլուն և Օկունեվին։ Պատգամաւորները դիմաւորում են այդ ընկերներին կեցցէներով և ծափահարութիւններով, որոնք ստիպում են դատաստանական պալատի դատախազ Կամիշանսկուն դուրս թռչել կողքի սենեակից և իշխանական հայեացք նետել դէպի դահլիճը։

Ուղիղ ժամը 1-ին դահլիճ է մտնում պալատի առանձին ատեանը, և նախագահ Կրաշենինիկովը նիստը յայտարարում է բացված։

Դատաստանական պրիստաւ Երմոլայեվը մօնօտոն եղանակով զեկուցանում է ատեանին բացակայողների մասին. ներկայ չեն Այվազեան, Վինավեր, Գօմարտելի...

Բայց ահա ամենասրտայոյզ տեսարանը։ Լսվում է բացակայողների թիւում հանգուցեալ Մուխանովի ազգանունը։ Եւ յանկարծ պատգամաւորների ու պաշտպանների ահագին խումբը՝ մի սիրտ, մի հոգի՝ լրիվ ոտքի է կանգնում ու նորից նստում։

Պրիստաւը այդ անակնկալ դէպքից շփոթված այս ու այն կողմ է նայում և շտապում վերջացնել։

Նորից լսվում են՝ Շիրկով, Իօլլոս, Հերցենշտէյն։ Եւ ամեն անգամ 160 հոգուց բաղկացած այդ բազմութիւնը անխօս, իբրև մի մարդ, ոտքի կանգնելով յարգում է նրանց յիշատակը և նորից նստում։

Դատաւորները ժայլվում են։ Արտասովոր ժենոլորտ է մտել դատաստանական դահլիճը։ Սակայն նկատողութիւններ դեռ ևս չեն լսվում։

Դրանից յետոյ սկսվում է մեղադրեալների հարցաքննութիւնը, և դատաստանական

ձևականութիւնը հանդէս է գալիս իր ամբողջ ծաւալով, որի միջից դուրս է լողում անցողական շրջանի ամբողջ տրագիզմը։

— Ինչով էք, մեղադրեալ, պարապվում։

Եւ լսվում են պատասխանները.

«Նախկին նախագահ վարչութեան, նախկին ուսուցիչ, դատարանի հեռացված անդամ, դատախազի նախկին օգնական, ազնուականութեան հեռացված պարապլուխ և նախկին պատուաւոր հաշտարար դատաւոր, նախկին ազրսնօմ, հեռացված խմբագիր, զբաղվում էի հասարակական գործունէութեամբ, իսկ այժմ երկրագործութեամբ, երգուեալ-հաւատարմատար, պրոֆեսոր, բժիշկ, գիւղացի, մէշչանին, ազնուական, իշխան... բանւոր, երկրագործ, գրականագէտ, գիտնական... մահմեդական, լիւտերական, հրէայ, կաթոլիկ, հայ, ուղղափառ, ուղղափառ, ուղղափառ... 27, 30, 40, 50, 60 տարեկան...» Թոյլ, ուժեղ, խրոխտ, կամաց ձայներ... Այդ բոլորի մէջ սակայն նկատվում էին արժանապատուութեան գիտակցութիւն, բարոյական ոյժ, անմատչելի...

Եւ ամէն մի բառի, երբ հնչում էր «նախկին, հեռացված, զրկված, տրտաքսված» բառերի շարանը, պատգամաւորների բազմութեան դէմքերի վրա խաղում էր տխուր ժպիտը։ Արդէն չափից դուրս ազեղ ու ակների կերպով է մերկանում առաւելապես «փրածնվող» կանանց եղերական անպատեհութիւնների կարիկատուր ծամածռութիւնը։

Սակայն այդ օրվայ ամենաուշագրաւ երևոյթը, երբ գահիճի տրամադրութիւնը իր գաղաթնակէտին հասաւ, Մուրօմցեվի հարցաքննութիւնն էր։ Նիստից առաջ պատգամաւորների մէջ միաք էր ծագել, հէնց որ հարցաքննութեան ժամանակ կը կանչեն Մուրօմցեվի ազգանունը և նա ոտքի կանգնի, ի նշան ողջոյնի և յարգանքի զէպի առաջին Դումայի նախագահը՝ պէտք է ոտքի կանգնեն նաև բոլոր պատգամաւորները։ Համաձայնութիւնը ընդհանուր էր և շատ։ Սակայն մի քանի բառից յետոյ Մուրօմցեվը իմանալով այդ, խնդրում է այդպիսի ցոյց չանել։ Պատգամաւորները յարգում են այդ խնդիրը։

Զը նայելով գրան, հէնց որ դատարանի նախագահը արտասանում է՝

— Միաղրեալ Մուրօմցեվ!

Եւ Մուրօմցեվը առանց շտապելու, մեծ արժանապատուութեամբ ոտքի է կանգնում, յանկարծակի ազնուութեամբ ոտքի է կանգնում նոյնպէս և ամբողջ պատգամաւորութիւնը յարգելու իր նախագահին։

— Ինդրում եմ նստել,—լսվում է նախագահի խիստ ձայնը։

Եւ այդ ժամանակ միայն նկատվում է չոր-ձևական դատարանի առաջին զայրոյթը արտասովոր դատապարտեալների անհնազանդ մասսայի դէմ։

Պատգամաւորները նստում են։ Դանլիճում նորից լռութիւն է տիրում։

— Սերգէյ Անդրէեվիչ Մուրօմցեվ, ստասսկի օսվետնիկ։ Մոսկվայի համալսարանի օրվինար պրոֆեսոր։ Ստացել եմ 80 դատաւորների ցուցակը...

Շարժում։

— Դատարանի կազմը, այդպիսով, յայտնի չէ ինձ,—ասելացնում է Մուրօմցեվ։

Եւ կանգնած՝ սպասում է պատասխանի։

Նախագահը մի փոքր շփոթվելով և ներքին զայրոյթով պատասխանում է, սակայն չէ տալիս ճշգրիտ պատասխանը։

Մուրօմցեվը, չը գոհանալով այդ պատասխանից, շարունակում է.

— Ես կուզենայի իմանալ՝ ո՞վ և ինձ դատում։

Հարցը թէև ձևական, բայց և այնպէս չափազանց նշանակալից էր։ Դատարանի նախագահը հաղիւ լսելի ձայնով կարդում է ցուցակը։

Ժամը 5-ի սկզբներում դատարանը կարդում է մեղադրական ակտը. նորից սկսում են կարդալ 160 մեղադրեալների ազգանունները և հարցնել՝ «մեղաւոր էք ձեզ ընդունում»։

Ամենքն էլ բացասական պատասխան են տալիս։ Ժամը 5½-ին նիստը փակվում է մինչև դեկտեմբերի 13-ի առաւօտեան ժամը 11-ը։

Խուսն բազմութեամբ դուրս են գալիս պատգամաւորներն ու պաշտպանները։

Պատգամաւորներին դատարանի մուտքի առջև երկու սինեժաւոգրաֆներ նկարում են խմբին։

Տարալված Դումայի կենդանի ստուերները շուտով կը պատկերանան կտաւի վրա ի տես հասարակութեան՝ իրանց դողդոջուն, փութկոտ տեսիլներով։ Եւ այդ չէ մնալու, արգելք, ապագայ սերնդին յիշատակ, իբրև սարկաստիքական խորհրդանշան այն յստակ ցնորքների և յոյսերի, որոնց հայրենիքը երբեմն գնում էր ռուսական առաջին դիւրարբրոջ և ազնիւ պարլամենտի վրա...

(«Բ.» և «Т.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպէս յայտնի է, Պետական Դումայի նախագահ Ն. Ա. Խոմեակովը միջնորդութիւն է յարուցել մինիստրների խորհրդի նախագահի առջև մամուլի ներկայացուցիչների մուտքը Դումայի կուլուարները թոյլատրելու համար։ Այդ միջնորդութիւնը չը յարգվից։ Դանալով, որ իրերի ներկայ դրութիւնը, որի շնորհիւ կուլուարները մտնելու իրաւունք են ստանում հեռագրական գործակալութեան և պաշտօնական մամուլի ներկայացուցիչները միայն, խախտում է միւս լրագիրների աշխատակիցների շահերը, Դուման կարգադրել է այլևս թոյլ չը տալ կուլուարները մտնելու գործակալութեան և տեղեկատու բիւրօյի աշխատակիցներին։

Կուլուարներում խօսում են, որ մուսուլման պատգամաւորների տրամադրութեան մէջ զգալի փոփոխութիւն է նկատվում։ Անցեալ Դումաներում մուսուլմանները սերտ յարաբերութիւններ էին պահպանում սահմանադիր-ռամկավարների հետ։ Այժմ նրանց յարաբերութիւնները վատթարացել են։ Մօտիկ ապագայում, ընդհակառակը, մանաւոր համաձայնութիւն է կայանալու նրանց և կենտրոնի միջև, որը աշխատում է ձայներ գրաւել ձախակողմեանններից։ Դրա համար մի քանի զիջումներ պետք անվեն մուսուլմաններին կրօնի և ուրիշ հարցերում։ Միաժամանակ լուր է պատում, որ լեհական կօլօն ևս հոկտեմբերեանններից հրաւէր է ստանում բլոկ կազմելու համար, սակայն կօլօն առայժմ հրաժարվում է ընդունել այդ հրաւէրը։

Ժողովրդական կրթութեան ժամանակորը ժողովրդական ուսուցիչներին օգնելու նպատակով յատկացրել է 5½ միլիոն բուբլի գումար, իւրաքանչիւրի համար 360 բուբլի պարգև նշանակելով։

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՑ

IV

Մեր ընթերցողներից շատերը, որոնք ծանօթ չեն մեր երկրի ներքին քաղաքական գործերին ու նրա անցեալ պատմութեանը, անշուշտ չեն կարող հասկանալ, թէ ինչ նշանակութիւն ունեն պատգամաւոր Բօդիչեվի զրպծած «սուօլիպինեան փողպատ» խօսքերը, որոնք այնպէս խիստ ազդեցութիւն գործեցին թէ ամբողջ մինիստրութեան և թէ բոլոր պատգամաւորների վրա ու այնպէս ամտրիկ իրարանցում առաջացրին Պետական Դումայում և որոնց պատճառով Դուման ձայների անդին մեծամասնութեամբ որոշից այդ ամենատգնդաւոր հոնաօր-պատգամաւորին ամենախիստ պատժի ենթարկել, այն է՝ զրկելով նրան 15 օր Դումայի նիստերին ներկայ լինելու իրաւունքից։

Բանը նրանումն է, որ մինչև օրս գրականութեան մէջ «սուօլիպինեան փողպատ» խօսքերը գոյութիւն չունէին, այլ կային և յայտնի էին «Մուրավիեվի փողպատ» կամ «Մուրավիեվի վէնոց» խօսքերը, որ քաղաքների կամ գրական ոճով կախաղանին են ասում։ Այդ խօսքի պատճութեան հետ անմանօթ մարդը առաջին անգամից կարող է ենթադրել, թէ կախաղան հնարողը, անշուշտ, Մուրավիեվ անունով մէկին է եղել, և այդ պատճառով էլ մարդկանց խիզդաժան անելու այդ գործիքն էլ իր հնարողի անունովն են կոչում, ինչպէս որ, օրինակի համար, Ֆրանսիայում էլ ժանապարհներին գլխատելու գործիքը իր հնարողի անունով Գիյօտին է կոչվում։

Սակայն այդպէս չէ. կախաղանի հնարողը եղբէք Մուրավիեվը չէ եղել։ Մուրավիեվը, 60-ական թուականներին Լիհատանում պալթած ապստամբութեան ժամանակ, գեներալ-նահանգապետ էր նշանակվել այնտեղ, որին և յանձնվել էր ապստամբութիւնը ճնշել։ Նա էլ իր վրա դրված յանձնարարութիւնը կատարեց այնպէս, ինչպէս որ ինքն էր հասկանում, այն է՝ զօր տուեց կախաղաններին և այնչափ մարդ կախել տուեց, որ վերջ ի վերջոյ այն ժամանակվայ յեղափոխականների կողմից «Մուրավիեվ-կախող» անունը ստացաւ, իսկ կախաղանն էլ այն ժամանակվանից «Մուրավիեվի փողպատ» կամ «Մուրավիեվի վէնոց» կոչվեց թէ հասարակ խօսակցութեան և թէ մամուլի մէջ։

Ահա հէնց այդ իմաստով էր, որ Բօդիչեվն էլ «սուօլիպինեան փողպատ» բառերը գործ ածեց Պետական Դումայում. ուստի և զարմանալի չէ, որ այդ բառերը այնպէս խիստ կիրքով ցնցեցին բոլոր ունկնդիրներին, մանաւանդ հէնց իրան՝ Սուօլիպինին։

Սակայն, այդ իրարանցումի ժամանակ, ամենից տարօրինակն էր աջակողմեանների բարձրացրած աղմուկն ու վայնասունը։ Տարօրինակ էր, ասում ենք, նրա համար, որ 2-րդ Պետական Դումայի օրով հէնց այդ կուսակցութեան ղեկավարներն էին, որ շարունակ յարձակվում էին մինիստրութեան ու նրա նախագահ Սուօլիպինի վրա, ասելով՝ որ սա թոյլ է վերաբերվում դէպի յեղափոխականներն ու «կրամօլնիկները» և պէտք եղած չափով գործադրութեան մէջ չէ դնում «Մուրավիեվի փողպատը»։ Ի պատասխան աջակողմեանների հէնց այդ ցանկութիւնների էր, որ Բօդիչեվը ասաց.

— Այն միջոցը, որով կառավարութիւնը ցանկանում է երկիրը հանդարտացնել և արդէն հանդարտացնում էլ է, և որը 2-րդ Պետական Դումայում Պուրիշկեվիչը «Մուրավիեվի վէնոց» էր անուանում, ես վախենում եմ, որ այդ միջոցը ապագայ սերունդները «սուօլիպինեան փողպատ» կանուանեն։

Ինչպէս տեսնում էք, այս խօսքերը ում էլ որ վերաւորէին, յամենայն դէպս աջակողմեաններին ոչ մի կերպ չէին կարող վերաւորել. չէ՞ որ հէնց դրանք են կախաղանի գործածութեան ամենամեծ սիրահարները և կառավարութիւնից մեծ չափերով կախաղաններ պահանջողները։ Սակայն, նրանց առիթ էր հարկաւոր՝ մի կողմից մինիստրութիւնը շողոքորթելու և դէպի իրանց կողմը զրաւելու, իսկ միւս կողմից էլ կառավարութեանը ուելի ևս կատիների դէմ զրգռելու։ Եւ նրանք մեծ վարպետութեամբ օգտվեցին Բօդիչեվի ներկայացրած առիթից ու, մինիստրութեան և մանաւորապէս Սուօլիպինի ամենաջերմ պաշտպաններ ու սիրահարներ ձևանալով, անդին վայնասուն բարձրացրին Դումայում։

Պակաս վայնասունի մէջ չէր նկատ և հոկտեմբերեանները. զուցէ, սրանք ուելի անկեղծ լինէին իրանց արտայայտած զգացմունքների մէջ, քան աջակողմեանները, և զուցէ սրանք այնչափ էլ չը զայրանային Բօդիչեվի դէմ, որովհետև, այսպէս կամ այնպէս, հոկտեմբերեանները այնչափ էլ արիւնարբուն ու կախաղանի սիրահարներ չեն, ինչպէս աջակողմեանները. բայց այս վերջինների բարձրացրած վայնասունը տեսնելով և վախենալով, թէ մի զուցէ մինիստրութիւնը այդ դէպքի ազդեցութեան տակ բոլորովին աջակողմեանների գիրկը նետվի ու այսուհետև շարունակ նրանց ծրագրով ընթանալ, հոկտեմբերեանները էլ ամէն կերպ աշխատեցին իրանց վայնասունով բոլորովին յետ չը մնալ իրանց ծրագրից աջակողմեաններից։ Եւ հէնց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Բօդիչեվին ամենախիստ պատժի ենթարկեցին, չը նայելով որ սա իր խօսքերի համար ներողութիւն խնդրից թէ Սուօլիպինից և թէ ամբողջ Պետական Դումայից։

Բօդիչեվին այդպէս պատժելուց յետոյ, Դուման նորից մինիստրական դեկլարացիայի քննութիւնը վերադարձաւ։ Քննութիւնը ասում և ոչ քննադատութիւն, որովհետև իսկապէս քննադատութիւն չը կար այդ օրվայ խօսող ոչ աջակողմեանների և ոչ էլ հոկտեմբերեանների կողմից։ Աջակողմեանները, ինչպէս նախորդով ասացինք, միմիայն իրանց հրճուանքն էին յայտնում մինիստրական ծրագրին և ամէն կերպ աշխատում էին հաստատացնել մինիստր-նախագահին, որ իրանց ամբողջ ցանկութիւնն ու ծրագրին էլ հէնց նոյնն է, ինչ որ կառավարութիւնն է մտադիր անելու։ Իսկ հոկտեմբերեանները, որ մինչ այդ ժամանակ, ինչպէս ասացինք, պապանձվել էին, դեկտեմբով աջակողմեանների աջողութիւնը և Սուօլիպինի դէմի աջ թեքվելը, մէկը միւսի հետից սկսեցին ճառել ու հաստատացնել, թէ պատգամաւորները, մանաւանդ աջակողմեանները, շատ սխալ են հասկացել դեկլարացիան. թէև սրա այս ու այն կողմերը այս-ինչ և այն-ինչ ձևով են արտայայտված, բայց սխալ չէ պէտք է հասկանալ. դեկլարացիան հէնց այն է ուղղել ասել, ինչ որ էրանց՝ հոկտեմբերեանների ծրագիրն է թելադրում։

Մի խօսքով շատ ծիծաղելի ու մաղալու տեսարան էր ներկայացնում այդ օրը Պետական Դուման. նա, փոխանակ պահանջելու, որ մինիստրութիւնը իր ծրագրով յարմարվի ժողովրդային ներկայացուցիչների կամքին ու սրանց ցանկութեան համաձայն գործի, ամէն կերպ աշխատում էր ինքը յարմարվել մինիստրութեան ցանկութեանն ու կամքին։ Աջակողմեաններն ու հոկտեմբերեանները այդ օրը ճիշտ և ճիշտ երկու պատռված աղջիկների դերի մէջ էին։ Նրանցից ամէն մէկը ամէն կերպ աշխատում էր փեսացու Սուօլիպինին սիրաշահել, ասելով նրան.

— Ես ուելի պիտի կարողանամ քեզ յարմարվել, միայն թէ դու ինձ վրա ամունացիր։

Բայց փեսացուն իր խօսքն արդէն ասել էր։ Մնում էր միայն վերջնականապէս քուէարկել ու հասկանալ, թէ նա Պետական Դումայի մէջ ինչ չափով սեծամասնութիւն ունի։

Առաջարկվեցին ու քուէարկվեցին 6 բանաձև, բայց և ոչ մէկը մեծամասնութիւն չը ստացաւ։ Այդպէսով ի զուր անցան թէ աջակողմեանների և թէ մանաւանդ հոկտեմբերեանների բոլոր ջանքերը։

Դուրս եկաւ, որ այն Դուման, որը ամենարնդունակը պիտի լինէր օրէնսդրական աշխատանքներ կատարելու, այսինքն՝ ուր մինիստրութիւնը իր ուղղութեան համաձայն մեծամասնութիւն պիտի ունենար, և ո՛չ մի ծրագրի համաձայն մեծամասնութիւն չունի, ուրեմն և ոչ մի աշխատանք կատարելու էլ ընդունակ չէ կարող լինել։

Դա հոկտեմբերեանների կատարեալ խայտառակութիւնն էր և, զուցէ, ամենից ուելի մինիստրութեան խայտառակութիւնը...

Խ.-Ագատ

ՍՄԻՐՆՕՎԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՈՍԿՈՒ ՄԱՍԻՆ

Երէկ, դեկտեմբերի 17-ին, Պուշկինեան գրադարանում պ. Սմիրնօվ կարդաց իր 5-րդ դասախօսութիւնը ոսկու և պլատինի մասին։ Դասախօսի կարծիքով, որը հիմնված է ինժեներ Լեբեդեվի հետազօտութիւնների վրա, Կովկասը որպէս նոր երկիր հարուստ չէ ոսկու և պլատինի հանքերով համեմատած Ուրալեան և Ամերիկեան լեռնաշղթաների հետ։ Եթէ Կովկասն ունի ոսկու հարուստ հանքեր, բայց դրանք դեռ ևս խորն են գտնվում և հարկաւոր է մի որոշ շրջան, մինչև որ երկիրը ինքը բաց կանէ այդ հանքերը ծածկող շերտը։

Դասախօսի կարծիքով՝ ոսկու մասին յայտնի է միմիայն հին յունական արգոնաւորդների արշաւանքից. այնուհետև պատմութիւնը Կովկասի ոսկու հանքերի մասին՝ լռում է մինչև 19-րդ դարը։ (Մենք կասենք, որ հայ պատմագրերը յայտնում են, որ Երևանեան գաւառի մի մասում՝ հին Գողթնեաց գաւառում՝ հայոց իշխանութեան ժամանակ եղել են ոսկու հանքեր)։

Առայժմ ոսկու հանքերի կողմից յայտնի են Բուլթայիսի նահանգի Բաշինի գաւառի Ինգուր գետը, Սվանետի լեռնաշղթան, Աղվանի հովիտը, Ճորոխ գետը, Գրոզնայի շրջանը, Կարսի նահանգը։ Սևանի լճի ափերում, Նախիջևան գաւառի Երնջակ գետում կայ և պլատին։

Կայ ոսկու հանք Գանձակի նահանգի Աղստաֆա-չայ գետում, Դիլիջանի մօտերքը, Ղազախի, Աղստաֆա կամուրջի և Դաղքեսամանի մօտերքը։ Այստեղերի 100 պուդ ոսկու հանքից ստացվել են 2½, 3, 14 և 75 մասալ ոսկի։ Բայց այժմ այդ տեղերը անյայտութեան են տրված. ոսկու հանք կայ Գանձակի մօտերքում՝ Ղօշնալու և Հասանսու գետերում. վերջերումս ոսկու հանքեր գտնվեցին Կուր գետում Գրդանա գիւղի մօտերքում. այստեղի 100 պուդ հանքից ստացվում էր ½ և ⅛ մասալ ոսկի։

Յետոյ դասախօսը ցոյց տուեց ոսկու հանքի կարը և նկարներ, բացատրեց թէ ինչպէս պէտք է դանել և անալիզ անել։

Պ. Սմիրնօվի միւս դասախօսութիւնը լինելու է արծաթի հանքերի մասին, որոնցից մի քանիսը այժմս Կովկասում արդիւնաբերվում են։

Սը. Տէր-Աբրահամեան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

—

Պետերբուրգ, 27 նոյեմբերի

Ցաւում եմ, որ չը կարողացայ ժամանակին գրել ներկայ հարցի մասին։

Մայրաքաղաքում հայկական կլուբ հիմնելու միաքը վաղուց է որ մի խումբ մարդկանց մտածողութեան առարկայ է եղել և միայն այս տարի աջողվել է իրականացնել այդ։

Անցեալ 24-ին տեղի ունեցաւ հայկական կլուբի ընտանեկան երեկոյթը։

Եթէ ապագայում այդ երեկոյթները կլինեն այն բնաւորութիւնը, ինչ որ ընդգծեց մեր նրա հիմնադիրներից մէկը, կարելի է սպասել, որ նա ժամանակի ընթացքում կարող կը լինի յայտնի կուլտուրական դեր կատարել հայկական կեանքում։

Եւ իսկապէս, ունենալով մայրաքաղաքում մի ժողովատեղի, կարելի է այդտեղ հիմնել մաւոր շփման մի կենտրոն։ Եւ որպէսզի նա կարողանայ արդիւնաւէտ գործունէութիւն ունենալ և զրաւել յայտնի համակրանք գիտական, քաղաքական և հասարակական այլ խաւերում, անհրաժեշտ է, որ այդ հիմնարկութիւնը լայն դեմոկրատական լինի, իսկ պարապմունքները կրեն ծրագրային բնաւորութիւն։

Դժբաղդաբար մեզ չաջողվեց ձեռք բերել կլուբի կանոնադրութիւնը—նա դեռ պատրաստ չէ—որպէս զի կարելի լինի ասել, թէ դէֆիկտները, որոնք այդ օրը աչքի էին ընկնում, պատահական, ժամանակաւոր են, թէ ընդհակառակը ծրագիրը այդպէս է կազմված։ Թողնելով այդ նիւթի հետ ծանօթացնելը մի ուրիշ անգամվայ, ներկայ համակումս կը նկարագրեմ շաբաթ օրվայ (ամսոյ 24-ի) երեկոն։

Կլուբի համար բնակարան վարձված է մայրաքաղաքի արիստոկրատիկ մասում։ Բաղկացած է 6 սենեակից։

Կլուբի հիմնադիրները անգին եռանդ և ուշադրութիւն են դարձրել արտաքին շլացուցիչ մասի վրա, և սենեակները զարդարված են ճոխ և ճաշակով։

Միայն կահկարասիքի և 6 սենեակները զարդարելու համար ծախսված է հինգ հազար բուբլուց աւելի։

Ամբողջ կարասիքը մօդերն ոճով է շինված և ամէն մի սենեակ իր գեղարուեստական ընտրութիւնն ունի, սկսած պատատներից մինչև գրքերի կազմերը, ջահերը և այլն։

Մի պարոն մեր ուշադրութիւնն էր դարձնում սենեակներից մէկի կահկարասիքի վրա և առանձին հրճուանքով պատմում էր, որ այդ բոլորը յայտնի Տարնօվսկու կաբինէտից է և որ բարեբաղդաբար աջողվել է առևտրականին էժան գնով առնել։ Դրա հետևեալ սենեակի կահկարասիքը նոյնպէս Տարնօվսկունն է. սա կովկասեան ճաշակով է զարդարված և սա էլ առևտրականն է գնված և նոյնպէս էժան։

Միւս սենեակները զարդարված են նոյնպէս ճաշակով։ Բայց ուելի լաւ կը լինէր՝ ուշադրութիւն դարձնէին ընթերցարանի բովանդակութեան վրա. ընթերցարանում թող լինէր մի բոլորովին հասարակ սեղան դրված և վրան ամենայն քանակութեամբ օրաթերթեր և ամսաթերթեր, որպէս զի մարդ կարողանար գոնէ դրանով ասպարութիւնը անցկացնել։ Այդ պակասը չէ կարելի ոչնչով արդարացնել. նախ պէտք էր այդ բանը աչքի առաջ ունենային և յետոյ առևտրականում թանգանոց կահկարասի գնելը։

Հասարակութիւնը ըստ պատշաճի հաւաքվում է դանդաղ, այնպէս որ միայն գիշերվայ ժամը 11-ի մօտ հնարաւոր է լինում սկսել երեկոյթի «գրական» մասը։

Կլուբի հիմնադիրներից մէկը բարի գալուստ է մաղթում ներկայ եղող Պետական Դումայի պատգամաւորներին։ Նա իր ճառում աշխատում է պարզել կլուբի գործելու ծրագիրը, որից պարզվում է, որ նրանք ցանկանում են կլուբին տալ քաղաքական և ազգային բնաւորութիւն։ Մօտակայ գործունէութեան մասին ճառախօսը ասում է, որ նրանք մտադիր են այնպէս տանել գործը, որ այդ կլուբը հանդիսանայ միացնող մի օղակ ցանուցրիւ եղած հայ գաղութի մէջ։ Բացի դրանից՝ իրանք աշխատելու են նիւթ պատրաստել Պետական Դումայի պատգամաւորների համար։

Դեռ անցեալ երկու Դումաների ժամանակ,—ասում է նա,—պատգամաւորները գանգատվում էին, որ այստեղ, մայրաքաղաքում, չը կայ մի հիմնարկութիւն, չը կան մարդիկ, որոնք կարողանային տալ իրանց մանրամասն, հիմնված գօկումենտների վրա, տեղեկութիւններ հայկական կեանքի կարիքների մասին։ Եւ եթէ աջողվի մեզ այդ ուղղութեամբ գործել և հնարաւորութեան չափ օգնել պատգամաւորներին, դա հերիք է։

Ներկայ եղող պատգամաւորները՝ Աճեմեան, Մուրզաեվ և Սաղաթելեան իրանց կարծիքները յայտնեցին այդ հարցի վերաբերեալ։

Պ. Սաղաթելեանը մի ընդարձակ ճառով աշխատում էր պարզել իր հայեցակէտը։ Նա մատնացոյց արաւ, որ մայրաքաղաքի ինտելիգենտ հայ հասարակութիւնը շատ անտարբեր է վերաբերվում հայկական իրականութեան և չէ հետաքրքրվում ազգային հարցերով, մինչդեռ մեր հարևան ազգերի մէջ ազգային գաղափարը աւելի է զարգացած։ Խօսելով ազգային հարցի մասին, նա շատ մեծ տեղ է տալիս նացիոնալիստական տենդենցիաներին։ Աճեմեանը և Մուրզաեվը ընդհակառակը պնդում են, որ հարցը պէտք է աւելի լայն կերպով ընդգրկել։ տալով ազգային հարցին այսինի տեղ և նշանակութիւն, նրանք ասում են, որ միայն վճռվելով ընդհանուր ռուսական խնդիրներ՝ կը վճռվեն նոյնպէս մասնաւորապէս հայկական կեանքին վերաբերեալ խնդիրները։

Բոլոր պատգամաւորները գտնում են, որ եթէ ներկայ կլուբը իսկապէս կարողանայ իրականացնել այդ ամենը, ինչի վրա հիմնադիրներից մէկը իր ճառում ժամանակ արաւ, այն ժամանակ իրանց գործունէութեան համար մեծ թեթևութիւն կը ստեղծվի։

Վիճաբանութիւնները երկար չը տևեցին, որովհետև այդ օրը այսպէս ասած ողջոյնի երեկոյթ էր։ Տարօրինակ ապաւորութիւն թողեց կլուբի հիմնադիրների վերաբերմունքը պ. Զաւրիեանի միանգամայն արդար հարցին։

Պ. Զաւրիեանը փորձեց պարզել, թէ ինչու այդ երեկոյ ժողովված էին միայն մի յայտնի շրջանի, «կրուժօկի» մարդիկ, և հետաքրքրվում էր իմանալ, թէ ինչով են առաջնորդվում կլուբի հիմնադիրները, հրաւիրելով այդ երեկոյթներին այս կամ այն անձնաւորութեանը։

Երևի պ. Զաւրիեանը աչքի առաջ ունէր ուսանողութիւնը, հայ գաղութի անգին մասը, որը այդ երեկոյ միանգամայն բացակայում էր, որը, մեր կարծիքով, պէտք է ամենամօտ մասնակցութիւն ունենայ այս գործում։

Հիմնադիրներից մէկը (կարծեմ պ. Տիգրանեանը) աշխատում էր երկար կանգ չառնել այդ խնդրի վրա, առարկելով որ կանոնադրութիւնը դեռ պատրաստ չէ, պէտք է սպասել մի առժամանակ, և զարմանք էր յայտնում, որ պ. Զաւրիեանը չէ սպասել և այսօր հարց է բարձրացնում այդ առիթով։

Մեզ համար մնաց մութ, թէ ինչու կլուբի հիմնադիրները չօգտվեցին հանգամանքից և չաշխատեցին պարզել մեզ համար իրանց կանոնադրութիւնը։

Գուցէ դրա բացատրութիւնները մասամբ կարելի է գտնել այն փաստերի մէջ, որ ժողովարանի անդամ լինելու համար պէտք է վճարել 15 բուբլի և անպատճառ այն կարգով, ինչպէս որ ընդունվում են առհասարակ կլուբներում...։

Ծանր և ճնշող տպաւորութիւն է թողնում մեզ վրա այդ կլուբը. այնտեղ չը կար ինտելիգենցիա, չը կար ուսանողութիւն, չը կար կեանք...

Արսէն Քալանթար

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Արտասահմանեան թերթերի հաղորդած լուրերի համաձայն, տիկին Վան-Բրանդը արտասահմանումն էլ նոյն փայլուն աջողութիւնն ունի, ինչ որ Թիֆլիսում։ Նրա բոլոր գաստրօլների ժամանակ թատրոնը միշտ լիքն է լինում։ Մամուլը միաձայն վկայում է, որ նա առաջնակարգ երգչուհի և նշանաւոր դերասանուհի է, ինչպէս և հմուտ դերակատար։

Հաւանօրէն յարգելի դերասանուհին Թիֆլիս կը դայ մայիսի մօտերը։

II

Նոր-Բայազէտ, 14 դեկտ.

Ամսոյ 9-ին, ծխական դպրոցի դահլիճում, ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ զրական երեկոյթ ի յիշատակ հանգուցեալ Գերճ Պոչանի և յօգուտ նոյն դպրոցի չքաւոր աշակերտների։

Երեկոյթը սկսվեց «Մեր հայրենիք» քառաձայն երգով, որից յետոյ ուսուցիչ Լ. Պետրոսեան ծանօթացրեց հանդիսականներին Պերճ Պոշեանի գործունէութեան հետ, իբրև տաղանդաւոր գրողի, ուսուցչի և հասարակական գործչի։ Աւագ-ուսուցիչ Ն. Հայրապետեան խօսեց հայ ուսուցչի անցեալի, ներկայի և ապագայի մասին։ Աշակերտուհիները մէջ ընդ մէջ հայերէն և ռուսերէն ոտանաւորներ էին ասում։ Օրիորդ Գոռոյեանի արտասանած «Ախ մեր սիրոյը լիք դարդ ու ցաւ» ոտանաւորը լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա և կրկնվեց։ Բառաձայն խումբը Վ. Աֆրիկեանի ղեկավարութեամբ, բաւականին աջող կերպով, երգեց վեց ժողովրդական երգեր։ Երեկոյթը վերջացաւ «Պերճ Պոշեանը սեղանի առաջ գրում է» կենդանի պատկերով և ասիական պարերով։

Ցաւօք սրտի պէտք է ասել, որ այս անգամ դահլիճը դատարկ էր, ուստի բուֆետից և տոմսակներից գոյացած զուտ արդիւնքը հազիւ 20 ռուբլու հասաւ։ Մի ուրիշ ցաւալի դէպք, որ չէ կարելի աչքաթող անել, այն էր, որ երեկոյթի սկզբից մինչև վերջը հանդիսականների կողմից լսվում էին զանազան սրախօսութիւններ և անտեղի նեկատոլութիւններ։

Աւելորդ չէր լինի յիշել և այն հանգամանքը, որ դպրոցական հոգաբարձութիւնը թուլդ պաշտպան է հանդիսացել ռուսական այն առածին, որ ասում է՝ «Наша хата съ краю»։ Մի օր չը տեսանք, որ յարգելի պարոնները որոշ չափով օգնած լինէին թատրօնական գործին, չը նայած որ այդ բանը նրանց ուղղակի պարտականութիւնն է։ Ցաճախ նոյնիսկ նրանք ներկայ չեն գտնվում թատրօնում։ Այսպիսով ամբողջ թատրօնական գործը ծանրացած է սիրողների ղեկին, ուստի և երբեմն անաջողութիւնների են հանդիպում վերջիններս։

Ռ. Ազարեան

Ո՞Վ Է ԿՍՏՍԱՐՈՒՄ ՔԱՀԱՆԱՅՍՑՈՒԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» № 158-ում կարդացի, որ Թիֆլիսի Վանքի եկեղեցու ծխականների մէջ մի վէճ է բացվել այն խնդրի առիթով, թէ Խարազան քահանայի տեղ նոր քահանայացուի ընտրութիւնը ով պիտի կատարի։ Եկեղեցու ամբողջ ծուխը թէ՛ միայն քահանայի ծխականներն։ «Մշակը» շատ ուղիղ կերպով նկատել էր, որ հարցը պրինցիպային է։ Այս պատճառով կուզէի մի քանի խօսքով իմ կարծիքները յայտնել։

Ամենքիս համար անվիճելի ճշմարտութիւն է, որ մեր եկեղեցին կառավարվում է ընտրողական սկզբունքներով։ մեր եկեղեցական նուիրապետութիւնը բաժանված է այլ և այլ մեծ ու փոքր կառավարական միութիւնների՝ թեմ, վիճակ, ծուխ։ Ամենափոքր ու վերջին միութիւնը՝ ծուխն է իր եկեղեցով։ Այնպէս որ իւրաքանչիւր եկեղեցի կամ տաճար իր ծխական համայնքով միասին կազմում է մի անբաժան հասարակութիւն։ Այսպիսով՝ ծուխը եկեղեցունն է, այլ ոչ քահանինը։ Այս եկեղեցու համար անհրաժեշտ պաշտօնեաներ որոշողը, ընտրողը, սրանց ապահովութեան մասին մտածողը, հոգացողը, եկեղեցու պայծառութեան մասին կարգադրողը, այլ և այլ ծախսերի չափը, քանակը սահմանողը նոյն եկեղեցու իրաւաւէր ծխականների ընդհանուր ժողովն է իր միջից ընտրված հոգևոր պաշտօնեաների հետ միասին։ Իւրաքանչիւր եկեղեցի մի ընտանիք, մի տուն է կազմում, որ ոչինչ բաժան շահ, առանձին հաշիւ ունենալ չէ կարող։

Ծխաբաժանութիւնը քահանաների մէջ սահմանված է միայն ու միայն արտաքին հովութիւնը, լոկ ծխակատարութիւնները դիւրաւէտ կատարելու նպատակով։ Ուստի և ծուխը բաժանվել է թաղերով, այլ ոչ թէ անձերով։ Ծուխը պատկանել է այս-ինչ կամ այն-ինչ քահանայի հովութեանը՝ նայած ծխականի և քահանայի ընակութեան յարմարութեանը, այլ ոչ թէ անձնաւորութեանը։ Ասածներս անվիճելի կերպով հաստատում է Մխիթար Գոշի յետագայ կանոնը՝ «Ծուխ քահանայի ուրուք եթէ փոխեսցի քաղ ի քաղ, այն երիցուն լեցի ծուխ, յոր քաղ ընակեսցի։ զի մի է օրինակ հովութեան ընդ ամենայն տեղիս ուղղափառաց»։ Եթէ այս կանոնին աւելացնենք Ներսէսի և նոյն Մխիթարի կանոնը, որով սահմանվում է՝ «Ծուրս քահանայից յեկեղեցին պարտ է տանել և ոչ ի տուն միոյ ուրուք քահանայի միայն», այն ժամանակ այլ ևս ոչ մի կասկած չի մնայ, որ ծուխը եկեղեցունն է։ քահանաներին հատանելիք տուրքերը պարտ է տալ եկեղեցուն։ Մի եկեղեցի կարող է շատ քահանաներ ունենալ, մի արարողութեան կարող են մի քանի քահանաներ մասնակցել, այս տարի այս-ինչ թաղում ապրող ծխականը կարող է միւս տարին մի այլ թաղում ապրել, բայց նա համարվում է նոյն եկեղեցու ծխական և իր տուրքերը պարտաւոր է նոյն եկեղեցուն տալ։

Եւ այսպէս՝ երբ մեր նախնական եկեղեցու կանոնները մէկն ու մէկի ծխական լինելու միայն կապը ընդունում է եկեղեցին, իսկ քահանան հանդիսանում է փոփոխական, նայած թէ որ տարին որ թաղումն է ապրում, հետևապէս և նայած թէ իր ծխական եկեղեցու որ քահանային ժամ է ու յարմար հովելը։ Արդ, երբ ծխականի յարաբերութիւնները և պարտաւորութիւնները ուղղված են դէպի եկեղեցին, այլ ոչ դէպի քահանան, երբ միևնոյն եկեղեցու քահանան զրված է այնպիսի պայմանների մէջ, որ երբեմն մէկի և երբեմն միւսի ծիսական արարողութիւնները պիտի կատարի, նայած ընակութեան յարմարութեանը, շատ պարզ է, որ միևնոյն եկեղեցու համար որևէ պաշտօնեայ, մանաւանդ քահանայ ընտրողը եկեղեցու ամբողջ ծխական ժողովն է, այլ ոչ երբէք այս կամ այն քահանայի ծխականները։ Եկեղեցին իր ծխական ժողովրդով վերջին և ամենափոքր իրաւաբանական միութիւնն է կազմում։ Միևնոյն եկեղեցու մէջ տարբեր շահեր, տարբեր ձգտումներ, տարբեր մտութիւններ ստեղծելը եկեղեցու ամբողջութիւնը պառակտել ասել է, համայնական պատկերը եղծել ասել է, եկեղեցու միաբանական հոգին վանդել ասել է։

Բայց ինչու այս պարզ կարգադրութիւնն այսօր քաշքշվում է։ Մեր կարծիքով՝ պատճառն այն է, որ պատժական ձախ անցեալը տակն ու վրա է արել մեր եկեղեցու գեղեցիկ կարգաւորութիւնը և մենք այս տակն ու վրա եղած, այս խառնուփնթորված դրութեանը այնքան ընտելացած ենք, որ կարծում ենք, թէ ուղիղը հէնց այդ է։

Մեր օրերում ժողովրդին իբրև ոչխարներ հովում են քահանաները՝ իբրև հէնց իրանց սեփական հարստութիւն, կայուած, հօտ։ Քահանան խուզում է, կթում է ինչպէս կարողանում է. աշխատում է օր-օրի վրա աւելացնել իր ոչխարների թիւը, ու աւելացնել նրանցից ստացվող բուրդը, մածունը, կարագը, պանիրը, ժամացուն։ Այսօր, մեր խառնակ պայմաններում ոչ ժողովուրդն է ամաչում իր ոչխարացած վիճակից և ոչ քահանան է կարմրում ժողովրդին այդ ստիճան իր անձնական սեփականութիւնը ճանաչելու խայտառակութիւնից։ Մենք ունեցել ենք ժամանակներ, երբ առաջնորդական թեմեր ու վիճակներ կապալով են վերցրել այլ և այլ եպիսկոպոսներից և այս կապալառուներն էլ իրանց շահին համեմատ քահանաներ ու տիրացուներ են պահել ու կերակրել։ Եւ մինչ միևնոյնն այսօր չէ, երբ մի քանի հարիւր ծխականների տերը այս-ինչ կամ այն-ինչ քահանան է համարվում։ Ծխատէր քահանան գնում է ամառանոց՝ իր ծխի հովութիւնը յանձնում է ում կամենում է. և այս հովութիւնը ժամանակաւորապէս կատարելու վարձը, որոշ սակարկութիւնից յետոյ, որոշում է ծխատէր քահանան ինքը։ Կամ իր ծխականների տանը որևիցէ ծէս, արարողութիւն կայ, ինքը ժամանակ չունի, ուղարկում է իր կողմից այլ քահանաներից ում կամենում է և այլն։ Եւ այս բոլոր պայմաններում վարվում է իբրև տէր, առանց ամենևին հաշուի առնելու ծխականների կամքը, ցանկութիւնը և իրաւունքը։ Եւ այս ու սրա նման եղծված ու զեղծված մեր եկեղեցական կարգերին այնքան վարժված են մեր ժարդիկ, մեր ժողովուրդը, որ ոչ միայն փորձ չեն փորձում, ջանք չեն գործ դնում վերականգնելու իրանց իրաւունքները, իրանց եկեղեցու գեղեցիկ կարգերը, այլ ընդհակառակը հէնց իրանք ամուր պլլվում են եղծումներին։ Իսկ այն հոգևորականները կամ քահանայացուները, որոնք այդպիսի եղծված պայմանների կողմնակիցներ են, որոնք այդ խանգարվածներից օգտվողներ են, նրանք պարզապէս կամ ողորմելի ոգէներ են կամ իրանց անձն ու հաը մնուցանող շահամոլներ։

Այս ամենից յետոյ՝ պարզ է, մեր կարծիքով, որ հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի կողմից հաստատված վերջին ծխական կանոնադրութեան այն յօդուածը, որ քահանայացուի ընտրութիւնը եկեղեցու ծխական ընդհանուր ժողովին է տալիս, այլ ոչ այս կամ այն քահանայի ծխականներին, միանգամայն հարազատ է մեր եկեղեցու հոգուն, ուղիղ է, և այս պատճառով պաշտելի ու կատարելի ամեն մի պատուախնդրի և հասկացող ծխականի, քահանայացուի և առաջնորդի համար։

Մեսրոպ ա. քահ. Մելիան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Բաթում, 28 նոյեմբերի

Նոյեմբերի 22-ին, երկրորդ անգամը լինելով, հայոց եկեղեցում հրաւիրված էր ծխական ժողով՝ լսելու Հայրիկի Թաղման պատգամաւոր պ. Սար. Յարութիւնեանի զեկուցումը։

Չը նայած ժողովի հրաւիրող երէցփոխ պ. Լ. Պապովեանի ներկայութեան, յանկարծ մի նորեկ պարոն (դէպի որը, պէտք է ասած, «մեր տղերքի» շարքերը շատ յարգանքով էին վերաբերվում) ինքնակոչ կերպով վեր է կենում ու «Հայրենակիցներ և քաղաքացիներ» ձայներով ուղում է բացատրել ժողովի նպատակը։

Ժողովականներից ոմանք, չը հանդուրժելով այդ ինքնակոչի յանդգնութեան, ընդհատում են նրան, զիմելով պ. երէցփոխին և պահանջելով որպէս ծխական ժողովի հրաւիրող, թոյլ չը տալ զանազան ինքնակոչների նախագահական դերի մէջ մտնել, այլ ինքը բաց անէ ժողովը և յայտնէ նրա նպատակը։

Երէցփոխը հրաւիրում է պ. Սար. Յարութիւնեանին տալու իր զեկուցումը։ Վերջինս, մի քանի խօսքերով ամփոփելով Հայրիկի Թաղման զեկուցումը, բաւականին երկար կանգ առաւ «Հայրիկեան ֆօնդի» վրա, նոյնութեամբ կրկնելով այն միակողմանի տեղեկութիւններն ու բացատրութիւնները, ինչ որ տալիս էին «Կովկասեան Առաւօտը», «Նոր Ալիքը» և «Վտակը»։

Ժողովականներից ոմանք ժանրաման կերպով քննադատեցին Հայրիկեան ֆօնդի մասին եղած էջմիածնի պատգամաւորներից մի փոքրիկ խմբակի վճիռներն ու որոշումները, գտան, որ ներկայումս, երբ թիւրքահայերը սովից կոտորվում են ու հաղիւ թէ թոյլտութիւն է եղել Ռուսաստանում և Կովկասում հանգանակութիւններ անել յօգուտ այդ սովեալների,—ասին որոշ ժարդիկ, որ ասիթներ են որոնում միշտ «մեծ գործերի» ինիցիատիվին տիրանալ, երևան են բերում ֆօնդի անունով հանգանակութիւններ անելու հարցը, այդպիսով՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար՝ ջնասելու յօգուտ սովեալների լինելիք հանգանակութեան...

Մատնանշվեց Գէորգեան ճեմարանի նուիրական անձուկ վիճակը, ճեմարանի փակելու մասին տեսակալի սպառնալիքը, հրաւիրվեց ժողովրդին չը շլանալ հանդուցեալ Հայրիկի անունը յաւերժացնելու ցուցամոլական տենչից։ Յայտնի, հռչակաւոր գործիչները իրանց գործերով են անմահանում, նրանց յիշատակն յաւերժացնելը շտապելու պէտք չունի։ Երբ յարմար ասիթը լինի, ժողովուրդն այն ժամանակ իր հրախտագիտութիւնը կարող է արտայայտել։ Մանաւանդ՝ գործչին թարմ տպաւորութեան տակ գնահատելը կարող է միակողմանի լինել. աւելի արժանաւոր գնահատութիւն կը լինի այն ժամանակ, երբ կրքերն ու ոգևորութիւնները «կը նստեն», երբ կը գայ անաչառ պատմաբանը իր անաչառ գնահատութեամբ, որին և արձագանք կը տայ ժողովուրդը առանց կանխակալ կարծիքների։

Երբ ժողովուրդը խաղաղ և լուռ լսում էր ճառախօսին, յանկարծ այդ խաղաղութիւնը խանգարեց մի «ընկնաւոր» բացականչութիւն.

— Հայրենակիցներ և քաղաքացիներ. Հայրիկի անունը թաղել են ուզում, թաղում են, թաղում, թաղում...։

Բոլոր ժողովականները կարեկցութեամբ նայեցին ձայնի կողմը, և, ով զարմանք, «նորեկն» էր այդ գոռգոռացողը, որը՝ ոտքով, ձեռքով, գլխի և մարմնի բոլոր շարժումներով աշխատում էր իրանց տգեղիկ ճառախօսի «գայթակղեցուցիչ» տպաւորութիւնից։

Նախագահը, որ իրան չափազանց լուրջ էր պահում (չը նայած նրանց «տղերքից» էր) քաղաքավարի կերպով զգուշացրեց «նորեկին», որ նա լրջութիւնից դուրս չը գայ։

Որովհետև շարունակ պնդում էին էջմիածնի պատգամաւորական ժողովի որոշման վրա, պատասխանվեց, թէ նախ՝ պատահական պատգամաւորներ այդպիսի մի որոշում անելու իրաւունք չունէին, երկրորդ՝ 180 պատգամաւորներից միայն 40 հոգին են այդ որոշումը կայացրել, որը և դադարում է նոյնիսկ պատգամաւորական խորհրդակցական ժողովի որոշում լինելուց։ Նորից «նորեկը» ոգևորված վեր է թռչում տեղից և ինքնամոռացմամբ բացականչում. «Մեր թերթը դադարել է. շուտով նորը լոյս կը տեսնի, և մենք բոլորը կը պարզենք այնտեղ»։ Ժողովականներից մէկը շատ միամիտ կերպով հարց է տալիս.

— Ո՞րն է ձեր թերթը։

— «Վտակը»...

Շատերը ժողովից հեռացան։ Միայն «շարքերը» անհամբեր սպասում էին քուէարկութեան, որպէսզի իրանց «պարտականութիւնը» կատարեն և գնան...

Մ. քահանայ Մելիանը մի ընդարձակ ճառով բացատրեց «Հայրիկեան ֆօնդի» օգտակարութիւնը, գտնելով, սակայն, որ այդ անունը շահագործելու իրաւունք չունեն մասնաւոր խմբակցութիւններ, որոնց գոյութիւնը բոլորովին այլ նպատակներով է պայմանաւորվում։ Այդպիսի մի մեծ գործ ձեռնարկելու իրաւունք ունի համազգային լիազօրների ժողովը միայն։

«Շարքերը» շտապեցնում էին քուէարկութիւնը և «ձայն բարձրացի» օրէնքը պնդելով՝ աջողեցրին անցկացնել «յատուկ հրահանգներով եկողի» բանաձևը, որով Հայրիկեան ֆօնդի համար ընտրում են տեղական մասնաժողով, որը և պիտի ձեռնարկի հանգանակութեան։

«Նորեկը» միւս օրն և եթ յաղթականօրէն ճանապարհվում է Թիֆլիս, որտեղ «իրանց թերթում» թերևս պիտի ապացուցանի, որ Բաթումն էլ իրանց կողմն անցաւ...

Մար.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հանգուցեալ Պերճ Պոշեանի Թաղման կարգադրիչ Մատնաժողովը խնդրում է մեզ յայտնել, որ նա իշխանուհի տիկին Մարիամ Թումանեանից պակի փոխարէն ստացել է 5 ր. մահարձանի համար։ Այլն ստացված է մի դրութիւն «Լուսաբի» խմբագրութիւնից, որով խմբագրութիւնը, հանգուցեալի դագաղի վրա պակ դնելու փոխարէն, յանուն Պոշեանի հիմնելիք գրադարանին նուիրում է «Լուսաբի» տասներկու տարեայ բոլոր համարները։

— Ինչպէս մենք հաղորդեցինք, դեկտ. 12-ին Շամխոր և Ալաբաշլի կայարանների միջև № 4 պօստային գնացքը խորտակվեց։ Լրացուցիչ տեղեկութիւններից երևում է, որ գնացքը խորտակվեց ճանապարհի լայնանալու պատճառով։ Խորտակման ժամանակ շոգեմեքենան և վագոնների 4-ը դուրս են գալիս գծից, պօստային վագոնը և առաջին երկու վագոնները ծռվում են կողքի վրա, ճանապարհը փչանում է։ Ծանր ջարդուածքներ է ստանում պօստային պաշտօնեան և թեթև՝ ճանապարհորդներից 5 հոգի։ Գանձակի կայարանից ուղարկում են շուտափոյթ բժշկական օգնութիւն, իսկ Թիֆլիսից՝ օժանդակիչ վագոններ։ Պօստը և բագաժը անվնաս են։ Հաւանօրէն չարագործները թուլացրել են գծերը, որի պատճառով էլ գնացքը խորտակվեց։ Քննութեան համար դեկտ. 19-ին Թիֆլիսից մեկնեց մի յատուկ մանաժողով։ Առայժմ վիրաւորվածներից Թիֆլիսի երկաթուղային հիւանդանոցն են բերվել նամակատար Զօլարէրիձէն և երկրորդ կարգի ճանապարհորդ Եսիաշվիլին։ («Յ.»)

— Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր կուրսերում (Ալեքսանդրեան այգի), պրոֆ. Ս. Ս. Խախանովի կը սկսի կարդալ իր դասախօսութիւնները վրաց գրականութեան պատմութիւնից։ Դասախօսութիւնները կարդալու է ամեն օր, բացի մեծ տօն օրերից (դեկտեմբերի 24-ին և 25-ին և յունվարի 1-ին), երեկոյեան ժամը 6—7-ը։ Բոլորը դասախօսութիւնների թիւը լինելու է 11, կարդալու է հետևեալ ծրագրով. 1) վրաց գրականութեան պատմութեան աշխատութիւնների մասին ընդհանուր տեսութիւն, 2) վրացիների լեզուն և կենցաղը, 3) բանաւոր ստեղծագործութեան աշխատութիւնները, 4) պարականօն (отреченной) գրականութեան աղբիւրները, 5) եկեղեցական գրականութիւն, 6) հին վրացիական բանահիւսութեան երկու հոսանքները, 7) Շավթելի և Զախրուխա, 8) Ամիրան-Զարեջանիանի և Դիլարիանի, 9) «Վիսարամիանի», 10 և 11) Ռուսթավելի։

— Թիֆլիսի գիւղատնտեսական բանկի ընկերութեան կողոպտիչներ Լավրովի և Օբոլաձէի գործը նահանգական դատարանից վերադարձված է կարևոր գործերի քննիչին՝ վերստին քննութիւն կատարելու նոր աղբիւրներից, որովհետև գողացված տոկոսային թղթերից գտնվել են երկու զրաւ դրած թղթեր։ («Յ.»)

— Դեկտ. 19-ին խուզարկու ոստիկանութեան պաշտօնեաները խուզարկութիւն են կատարում Եփեմիա Դիամուկիձայի բնակարանում, Վօսկրեսենսկի փողոցում, № 6 տան մէջ, ուր գտնում են Թիֆլիսի աղնուականների բանկի երկու արժեթղթեր, 04422 և 04367 համարներով, որոնք գողացված են եղել անցեալ տարի ապրիլ ամսին վրաց գիւղատնտեսական բանկից։ Քննութիւնից պարզվում է, որ այդ թղթերը Դիամուկիձայի ժօտ գրաւ է դնում Քութայիսի նահանգի ընակիչ Լեոն Սիբիրյաձէն։ Վերջինիս ձերբակալում են. նա բացատրել է, որ Դիամուկիձայի ժօտնա գրաւ է դրել ոչ թէ երկու արժեթղթեր, այլ չորս, և որ նա այդ թղթերը գտել է փողոցում, բանկի կողոպտման օրը։ Ցեսարայ քննութիւնը պարզում է, որ այդ թղթերից մէկը, № 04428, գտնվում է Կրէդիտնի ընկերութեան հաշուապահի օգնական Դաւիթ Զոհրաբեանի ժօտ, իսկ միւսը՝ № 04388՝ Ազգ-Դիօնեան բանկում։ Վերջին թուղթը բանկին վաճառել է «Նախշիրա» ընկերութեան վարչութեան գրասենեակի ծառայող Սեդրակ Կիրակոսեանցը։

— Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ծառայողները երէկ ռոճիկ չը ստացան։ Ինչպէս ասում են, դեկտեմբերի 24-ից շուտ չենն ստանայ։

— Մօտ երկու տարի վրաց էկզարխութեան եկեղեցական-ծխական դպրոցների շրջանային հսկիչի պաշտօնը, որպիսին վարում էր Կովկասից մեկնած պրոֆէսոր Զօսորգովը, թափուր էր մնացել։ Ասում էին, որ այդ պաշտօնը պիտի վերացվի։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են, շրջանային հսկիչ նշանակվում է վրաց թեմական վերանսկիչ պ. Օտօէվը։

— Կովկասեան բժշկական ընկերութեան նիստում, որ կայացաւ դեկտ. 17-ին, բժիշկներ՝ Վնուկովը և Սօբէստիանսկին կարդացին իրանց զեկուցումները։ Բժ. Ֆէօդորով թէև սկսեց կարդալ իր գրած «Ցէմին և Բակուրիանին իբրև լեռնային կլիմայական կայարաններ» գրուածքը, բայց ուշ լինելու պատճառով չը վերջացրեց։

— Դեկտ. 19-ին կայացաւ քաղաքային բժշկա-առողջապահական մանաժողովի նիստը, ուր ի նկատի առնելով այն հանգամանքը, որ տօների պատճառով անագին քանակութեամբ մթերքներ են բերվում շուկաները, վճռվեց կազմակերպել սանիտարական խմբեր՝ քաղաքի զանազան մասերում շուկաների վրա հսկելու համար։ Իւրաքանչիւր խումբ բաղկացած է լինելու երեք հոգուց, որի հետ կը շրջէ նաև մի բժիշկ։

— Երէկ, ցերեկվայ ժամը 1-ին, Սալօլակի էլեքտրաքարշի գծի վրա դուրս բերվեց առաջին փորձնական վագոնը։

— Պետական աշխատանքների կապարատու Մուսայէլօվը, որ Հաւլաբարում դերձակի արհեստանոց ունի, աշխատանքներ չը լինելու պատճառով, արձակել է 45 բանւորներին։ Վերջիններս պահանջ են դրել վճարել երեք ամսվայ ռոճիկ։ Տեղի են ունենում բանակցութիւններ։ Բանւորները իրանց պահանջը պատճառաբանում են նրանով, որ իրանց և տերոջ միջև նախօրօք այդպիսի պայման կայ կապված։

— Դեկտ. 19-ին Թիֆլիսի 1-ին արական գիմնազիայի և առևտրական դպրոցի աշակերտներին արձակեցին տօների համար արհեստակցական միութեան վարչութիւնը, ինչպէս լսել է «Зак.» լրագիրը, մշակել է նոր պարտադիր որոշումներ ընկերութեան անդամների համար, որոնց հետևանքն պէտք է քաղաքավարի վերաբերմունք ցոյց տան յաճախողներին, հետևեն մաքրութեան և այլն։

— Լեռնային վարչութեան տեղեկութիւնների համաձայն, Բագուի նաւթահանքերից նոյեմբեր ամսվայ ընթացքում ստացվել է ընդամենը 38,000,000 պուդ նաւթ։

— Թիֆլիսում Անդրէեվսկի և Մելիկովսկի փողոցների անկիւնում դեկտ. 17-ին նետված ռումբի գործի առիթով քննութիւնը վերջացվելով երէկ, դեկտ. 20-ին, ներկայացվել է ժամանց. գեներալ - նահանգապետին Զարդագործներից մէկը՝ Նիկոլայ Զիկովանին ազատվել է։ Մնացած չարագործները, որոնք թիւով 7 էին, ճանաչվել են վկաներից և բանտարկված են Մետեխի բանտում. բոլորն էլ հաւանօրէն, կը յանձնվեն զինուորական-նահանգական դատարանին։ Զը պայթած ռումբը եղել է այսպէս կոչված ուռաւիան տիպի։

— ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են հետևեալը. «Երկու ամսից ի վեր է, որ ծխական ընդհանուր ժողովի կողմից ընտրված լիազօրների ժողովը զբաղված է եկեղեցու և ազգային երկսեռ դպրոցների հաշիւների քննութեամբ։ Յայտնվել է, որ 1) դպրոցական նախահաշիւների օրինաւոր կազմում և ծխական ժողովի նախնական վաւերացում չէ եղել. 2) ռաարկաների բաշխումը ուսուցիչներին եղել է կամայականօրէն և երբեմն առարկաներ տրվել են այնպիսի ուսուցիչների, որոնք ոչ մի գաղափար չունեն այդ առարկայի մասին. 3) երէցփոխը լիազօրների կողմից միաձայն ճանաչվել է թոյլ և անհամապատասխան այդ պաշտօնին և որոշվել է մասնաւորապէս խորհուրդ տալ նրան հրաժարվելու. 4) եկեղեցու հաշիւները կանոնաւոր չեն պահվում ժապաւենակալ մատեաններում, այլ մի հասարակ ծոցատետրում. 5) եկեղեցուն հասանելի գումարները կամայականօրէն տրված են այլ հիմարկութեան։ Այս բոլորի բացատրութեան համար թէև լիազօրների ժողովը մի երկու անգամ թէ հոգաբարձութեան և թէ երէցփոխին հրաւիրել են խառն ժողովի, սակայն նրանք խուսափել է։ Լսվում է, որ որոշ ժարդիկ որոշ շրջաններում ստորագրութիւններ են մուրում, որով կամենում են լիազօրների ժողովի որոշումները ոչնչացնել»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բելինակի փողոցում ապրող Իրասիօվա Միխնէլեան յայտնել է ոստիկանութեան, որ նրա խանութից գողացել են 300 ռուբլի։ Գողակած յայտնել է Վարվառէ Զեզէլաշվիլու վրա, որը և ձերբակալված է։

Դեկտեմբերի 19-ին, Նօվօ-Արենանցի փողոցում երեք տեղացիներ մտնելով Վասիլի Զաղլաձէի թանկրա տունը յափշտակել են օրվա հասոյթը՝ 50 ռուբլի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

— Պետերբուրգի մանկավարժական կուրսերում տեղեկութիւն է ստացվել, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հաստակրութեամբ է վերաբերվել Մոսկվայում մանկավարժական բարձրագոյն դպրոց հիմնելու մասին, որի նպատակը պէտք է լինի ուսուցիչներ պատրաստել գլխաւորապէս միջնակարգ թէ տղայոց և թէ աղջկանց դպրոցների համար։

— Պետերբուրգի դպրոցներից շատերում երևան են հանվել կեղծված վկայականներ, որոնք ներկայացված են ընդունված աշակերտների կողմից։ Այդ առիթով պատասխանատուութեան ենթարկվողների թիւը օրէ-ցօր աւելանում է։ Ներկայումս այդպիսի կեղծված վկայականներից օգտվելու համար պատասխանատուութեան ենթարկվողների թիւը, «Русь» լրագրի ասելով, 50 հոգուց աւելի է։

— Ապահովագրական ընկերութիւնների առաջ ներկայումս կանգնում է կալուածատէրերի դաստակերտները ապահովագրելու հարցը։ Խնդիրը նրանումն է, որ, 1906 թուականից սկսած, կալուածատէրերի դաստակերտների ապահովագրութիւնը անագին ՇԱՏ է պատճառել ապահովագրական ընկերութիւններին. այդ ժամանակամիջոցում նրանք հրդեհված կալուածների համար վճարել են ստացված պրեմիաների 167 տոկոսը։ 1906 թուի ապրիլական շարժումների հետևանքով նրանք մի օգուտ չենն ստացել ազնուականական նահանգների ապահովագրութիւնից։ Մինչև 1906 թուը ապրիլական շարժումը արտայայտվում էր գարձեալ հրդեհումներով, սակայն այդ հրդեհումները մեծ մասամբ կատարում էր ամբոխը մասայաբար, և որովհետև «բունտի» բնաւորութիւն էր կրում, ուստի ապահովագրական ընկերութիւնները, իրանց պօլիսային պայմանի համաձայն, ազատվում էին հրդեհումներից առաջացած վնասների վճարումից։ Մինչև 1906 թուից

սկսած, երբ գիւղում «հանդստութիւն» տիրեց, կալուածատէրերի դաստակերտները սկսեցին հրդեհել ծածուկ, հատ-հատ, իսկ աշդպիտի դէպքում ապացուցանել, որ «բունտի» հետևանք է, անհնարին է, և, ի հարկէ, ապահովագրական ընկերութիւնները ստիպված են հրդեհումից առաջացած վնասները վճարել։

«Р. Утр.» լրագրի ասելով, լուր է պատում, որ Դումային առաջարկվում է մի օրինագիծ պօստ-հեռագրական տեսչութիւնը դարձնելու առանձին մինիստրութիւն։ Այդ մինիստրութեան պաշտօնի համար հաւանական թեկնածու է համարվում ներքին գործերի նախկին մինիստր Պ. Ն. Դուրնովօն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ (ՇՏՈՒՏԳԱՐՏՈՒՄ)

IV *)

Սակայն մի ուրիշ կարևոր հարց. ինչ վախճան կունենար Դաշնակցութեան դիմումը, եթէ սոց.-դեմօկր. ենթասեկցիայի համաձայնութիւնը չըստացվէր և նա բացասական դիրք բռնէր։

Այդ դէպքում միայն ս.-ր.-ական ենթասեկցիայի համաձայնութեամբ խնդիրը լուծվել չէր կարող (ըստ ստատուտների) և Դաշնակցութիւնը պիտի դիմէր երկրորդ՝ աւելի բարձր՝ ինստանցիային — միջազգ. սոց. բիւրօյին։ Մենք ասացինք արդէն վերև, որ Դաշնակցութեան («Դրօշակի» դիրեկցիայի) հեռագրով դիմումից (յունիսի 10) մինչև Շտուտգարտ (օգոստոսի 16) բիւրօն նիստ չէ ունեցել. ասել է՝ Դաշնակցութեան երկրորդ դիմումը աւելի բարձր ինստանցիային (բիւրօյին) կը քննվէր միայն կօնգրեսից երկու օր առաջ տեղի ունեցած բիւրօյի նիստում, օգոստոսի 16-ին։

Իսկ ինչ է նշանակում դա։

Դա նշանակում է, որ Դաշնակցութիւնը մինչև օգոստոսի 16-ը, բիւրօյի նիստը Շտուտգարտում, չէր կարող պաշտօնապէս կօնգրեսի հրաւիրվել բիւրօյի սեկրետարիատի կողմից։ Դա նշանակում է, որ միայն օգոստոսի 16-ի նիստը կարող էր դրական կամ բացասական իմաստով լուծել Դաշնակցութեան մուտքի հարցը 18—20-ին սկսվող կօնգրեսի համար։ Դա նշանակում է, հետևապէս, որ Դաշնակցութիւնը՝ մինչև իր դիմումի վերջնական ելքը պատգամաւորութիւն չէր ուղարկել կօնգրես (նոյն դրութեան մէջ էին սիօնիստ սոցիալիստները և հրէական բանւորական կազմակերպութիւնը. ոչ «բունտը»)։

Կընդունէր արդեօք երկրորդ ինստանցիայի կամ բիւրօյի օգոստոսի 16-ի նիստը Դաշնակցութեան մերժված (առաջին ինստանցիայի մի մասի կողմից) խնդիրը, կը հարցնէ երևի շահագրգիռ ընթերցողը։

Դա մի հարց է իր զերազանց պրօբլեմատիկ իմաստով։

Ցամենայն դէպս կարևորը այդ հարցի դրական կամ բացասական պատասխանը չէ։

Մենք հաւանականութիւն ունենք ենթադրելու, որ գոնէ այս անգամ կը տապալվէին Դաշնակցութեան միտումաւոր ջանքերը։ Այո, մենք համարեա հաւատացած ենք։

Սոց.-Դեմ. Բան. Հայ Կազմ. ներկայացուցիչը միջազգ. սոց. կօնգրեսում, դեռ օգոստոսի 12-ին, պաշտօնական հրաւէր էր ստացել Բրիւսելից՝ բիւրօյի սեկրետարիատից, ներկայ լինելու Շտուտգարտում բիւրօյի նիստին օգոստ. 16-ին և հիմնաւորելու, պաշտպանելու կազմակերպութեան ուղարկած բողոքագիրը Դաշնակցութեան մուտքի դէմ (Դաշնակցութիւնից ներկայացուցիչ չը կար այդ նիստում և չէր էլ կարող լինել)։ Երբ կազմ. ներկայացուցիչը զուտ գաղափարային-սկզբունքային տեսակէտից մերկացնում էր Դաշնակցութեան բուրժուական-նացիօնալիստական ֆիզիօնոմիան, նրա համահայկական, հակադասակարգային կուսի բնոյթը, նրա 17 տարվայ հակասոցիալիստական մտածողութիւնն ու գործունէութիւնը, երբ նա նոյնիսկ Վիէննայի համագումարից ի վեր Կովկասեան և Ամերիկայի (ականջդ կանչի պանարմենիստ և համազգայնական «Հայրենիք») դաշնակցական թերթերում տպված յօդուածներից եւրօպական սոցիալիստի ականջը ծակող ցիտատներ էր առաջ բերում,—խուլ մրմունջով հնչվում էր hört, hört!—լսեցէք, լսեցէք, ընդհանուր զարմացականը, ամենից առաջ գերմանացիների—Բեբելի, Զինգերի, Ադլերի, Կաուցկու, Լօքսեմբուրգի և այլոց մօտ։

Բայց ինչ արած, խնդիրը արդէն լուծված էր դրական իմաստով առաջին ինստանցիայի միջոցով՝ նախ քան այդ նիստը, և ըստ սեկրետար Նիւմանի յայտարարութեան՝ բիւրօն իրաւունք և կարիք չունէր խնդիրը նորից քննութեան դնելու, երբ ռուսական սեկցիայի կողմից լուծված էր այդ։ Մենք այդպէս էլ համոզված էինք, վաղօրօք իրաւեկ լինելով կուլիսների ետևում հիւսված կեղծիքին։

Դաշնակցական «Մարիսխը» ի զուր է նեղանում իր հակառակորդներից և չեղած միտումներ վերագրում ռուս և հայ սոցիալ-դեմօկրատներին, որ իբր նրանք նոյնիսկ միջազգային հողի վրա հանգստութիւն չեն տալիս իրան։ Նախ ոչ մի ռուս սոցիալ-դեմօկրատ չէ արտայայտվել բիւրօյի այդ նիստում ձեր դէմ (Գլեխանովի պաշտօնը ստանձնել էր այդ ժամանակ Լենինը, որը, ինչպէս նիստից առաջ հաղորդում է, տեղեկութիւն չունէր կատարված պատմութիւնից, հետևապէս արտայայտվել անկարող էր)։ Ձեր դէմ արտայայտվողը միայն հայ սոցիալ-դեմօկրատիայի ներկայացուցիչն էր, և դուք ոչ մի բարոյական իրաւունք չունէք նեղանալու ձեր հակառակորդից, երբ վերջինս զգաստ ու գիտակից է բաւական, հայ դժբաղդ պրօլետարիատի շահերը պաշտպանելու նոյնիսկ այն հեռաւոր տեղերում, ուր հայկական աղաւաղված նացիօնալիզմը կոխոտում է գաղափարային բոլոր սրբութիւնները, և այդ բոլորը, մինչ ու ամեն դիպուածում, յանուն աշխատաւոր ժողովրդի, յանուն սոցիալիզմի։ Եթէ դուք Շտուտգարտից վաղեցիք Հաագա, իսկ այնտեղից՝ Էջմիածին, մենք ձեզ ուղղիչ խրատներ չը տուինք, լաւ իմանալով ձեր իդէական էութիւնը. մենք միայն գաղափարային պարտականութիւն ունենք հայ պրոլետարիատին հասկացնելու, որ Հաագա և Էջմիածին գնացողը նրա սկզբունքային թշնամին է, պիտի ազատագրվէ նրանից, եթէ ուզում է հաւատարիմ մնալ Շտուտգարտին։

Շատ մաղալու էր սոց.-յեղ. պարոն Բուրանովիչի դիրքը դէպի Դաշնակցութեան ընդունելութեան հարցը։ Նա հակառում էր հայ կազմակ. ներկայացուցչի դէմ, որ Դաշնակցութիւնը երեք ամսից ի վեր ընդունել է սոցիալիստական ծրագիր, կանգնել է դասակարգային կուսի տեսակէտի վրա։ Եւ այդ ճիշտ այն ժամանակ, երբ Կովկասում երիտասարդ դաշնակցականները կամ անջատական մանուկները յանուն էսէրիզմի (սոց.-յեղ. կուսակցութեան) թըղթեայ նիզակներ էին ճօճում մայր Դաշնակցութեան դէմ։

Էս-էր-իզմ—դա էկլեկտիկ աշխարհայեացքի ծրագրային անսկզբունք քաղաքականութեան և զիկ-զակ տակտիկային մի աննեղդաշնակ վիժուածք է, որի ռուս ներկայացուցիչները առանց ամօթահարութեան շարունակում են նպաստել և հովանաւորել հայկական-դաշնակցական նացիօնալիզմը՝ այստեղ, թէ դուրսը։

(Կը շարունակվի)

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դատաստանական պալատի յատուկ ատեանը նախագահ ազնուական Մուրօվցեվի և միւսների գործի առիթով յայտնելով ընդդիմախօսութիւնները վերջացած, առաջարկեց մեղադրեալներին հերթով պաշտպանել իրանց։ Խօսեց միայն Մուրօվցեվը։ Մնացածները հրաժարվեցին խօսելուց։ Ապա կարդացվեց հարցերի խմբագրութիւնը և յայտարարվեց միջարար, որպէսզի պաշտպանները խորհրդակցեն։

ՄՕՍԿՎԱ։ Դեկտեմբերի 17-ին համազգեմստվայի կազմակերպութիւնը Սամարայի նահանգի սովեալ ազգաբնակութեան համար իր լիազօրի անունով փոխադրեց 20,000 ր.։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Շտալբերգ արուարձանում ոստիկանութիւնը երևան հանեց պայթուցիկ նիւթերի գործարան։ Գտնվեցին 57 լիքը ռումբեր զանազան մեծութեամբ, բազմաթիւ պայթուցիկ գործիքներ, փամփուշտներ և ռումբերի կաղապարներ։ Ձերբակալված են երեք հոգի։

ՊՕԼՏԱՎԱ։ Մատակարարական մանաժողովը հաշուից յետոյ պարզեց, որ հասարակական շտեմարաններում ներկայումս կայ 222,618 պուդ աշնանացան, 65,210 պուդ գարնանացան և 214,354 բուբլի կանխիկ դրամ, որով գաւառի ազգաբնակութիւնը մատակարարական և սերմացուի տեսակէտներից միանգամայն ապահով է հանդիսանում։

ԿԻԵՎ։ Խօլերայով վերջին հիւանդը առողջացաւ։ Նոր հիւանդութիւն չը կայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պօրտ-Արտուրի գործի առիթով վկաների հարցաքննութիւնը շարունակվում է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԻՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. ժանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՅՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վենէրական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախոհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ
Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն 10—12 առաւօտ. 6—7 երեկ.
Ռտիշչեվսկի փող. № 22. (ամ. օ.) 10—8

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս սամոմսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւօտեան 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ա. Ճավճավաձէի № 36. (ա.օ.) 68—100

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վենէրական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեռբութեան փողոց № 33։
(ա. օ.) 68—160

1908
ՏՈՄՍԵՐԲԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Բացված է բաժանորդագրութիւն
„ԼՈՒՄԱՅ“
Գրական, պատմական եւ հանրայիմ
ԱՄՍԱԳԻՐ
Վերսկսելով «Լումայի» կանոնաւոր հրատարակութիւնը՝ խմբագրութիւնը յայտնում է իր ընթերցողներին, որ
1, Բաժնեգինը իջեցնում է 6 ռուբլու, աւելի լայն խաւերին մատչելի անելու համար։
2, Անպայման ընդունվում է միայն կանխիկ բաժանորդագրութիւն, որովհետև մենք բաւական ենք հաւատում թէկուզ 100 բաժանորդ ունենալ և վճարած, քան 1000 և ապառիկ՝ երկար տարիների ընթացքում։ Ոչ մի ապառիկ պահանջ չէ կարող կատարվել խմբագրութեանս կողմից, ում կողմից էլ լինի այդ։
3, Երբ բաժանորդների թիւը 500-ից անցնի՝ խմբագրութիւնս կը ձեռնարկէ Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի»-ի տպագրութեան, որ և ձրի կուղարկվի բոլոր վճարող բաժանորդներին։
4, Խնդրում ենք մեր թերթի ուղղութեան բոլոր համակրողներին տարածել «Լուման» և մեզ միջոց տալ աւելի ընդարձակել հրատարակութեան գործը։
Խմբ. հրատ. Գիւս ա. f. Աղանեանց
Մեր հասցէն՝ Թիֆլիս, Պօլիցէյսկայա 7, «Լումայի» խմբագրութիւն։
(ու.) 1—3

Հինգշաբթի, դեկտեմբերի 27-ին,
Յօգուտ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԴ. ԴՊՐՈՑԻ
չքաւոր աշակերտների
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ
կը լինի
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Գրական-երաժշտական բաժանմունքով.
3—5

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
(Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար)
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Գինն է 1 ր. 50 կ.
Միքայէլեան փողոց № 138
9—20

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
ԾՈՅԻ 1908 թ. ՊԱՏԻ
ՍԵՂԱՆԻ
ԵՒ
„Армянскій календарь съ предсказаніями“
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Մեծ քանակութեամբ գտնվելիս դիմում են՝ Թիֆլիս, Գաբաեվսկայա № 5, ՄԱԿԱՐ ՋՄՇԿԵԱՆ.
(շ.ե.) 10—12

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ
ցանկանալով պատանի սերնդի մէջ ընթերցանութեան սէր արծարծել որոշել է առաջիկայ 1908 թ. սկզբից հրատարակել մի պարբերական պատկերազարդ երկշաբաթաթերթ
„ՊԱՏԱՆԵԿԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆ“
որի բովանդակութիւնը կը լինի թարգմանութիւն եւրօպական հռչակաւոր հեղինակներից, որպիսիք են՝ Ժիւլ-Վերն, Մայն-Ռիդ, Ֆենեմօր-Կուպէր, Գուստաւ-Էմար, Վալտեր-Սկօտ և այլք, որոնց վէպերն ու պատմուածքները շատ նպատակայարմար են ճանաչված, պատանիների ընթերցասիրութեան ծարաւը յագեցնելու համար։
„ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“-Ը
կը հրատարակվի կանոնաւոր կերպով երկու շաբաթը մի անգամ, ուրեմն տարվայ ընթացքում 26 գրքոյկ։ Այս 26 գրքոյկները մի երկու տարվայ ընթացքում իւրաքանչիւր ընտանիքի համար մի համեստ գրադարան կարող են կազմել։
Խմբագիր Կ. ԽԱՏԻՍԵԱՆ
Տարեկան գինն է Բագուի մէջ . . . . . 5 ր.
Ուրիշ քաղաքներում . . . . . 6 ր.
Արտասահման . . . . . 8 ր.
Դիմել՝ Баку, редакція журнала „Патанеканъ-Градаранъ“—Контора Бакинскаго Армянскаго Культурнаго Союза. 8—2

Բացված է բաժանորդագրութիւնը
1908 թ.
„ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ“
Գրական, քաղաքական, հասարակական շաբաթաթերթի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Թիֆլիս	4 ր.	2 ր. 25 կ.
Գաւառ	4 ր. 50 կ.	2 ր. 50 կ.
Ամերիկա	3 դոլար	1 դ. 75 կ.
Արտասահման	15 ֆրանկ	8 ֆրանկ

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція „ЕРКРИ ДЗАЙНЪ“, Грибоѣдовская № 16 д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'„Erkri Dzain“, Griboédovskaya, № 16, maison Zoubaloff.
Կարելի է բաժանորդագրվել նաև «Գուտտենբերգ» գրավաճառանոցում և «Փարոս» կիոսկում։
(չ. ու.) 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Կարապետ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՅԻ
1908 թ.
„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Տասներորդ տարի)
ԾՈՅԻ ՕՐԱՑՈՅՑԸ զարդարված է Խրիմեանի, Զերազի և Մառի դուստրիկ պատկերներով, պարունակում է ընդարձակ վիճակագրութիւն երկրագնդի, գրագիտութիւնը, պարբերական թերթերը զանազան երկիրներում։ Պետութիւնների ծախսերը և զինւորական ծովային ու ցամաքային ոյժերը։ Ռուսաստանի ազգութիւնները, դպրոցները, վանքերը, վանականների ոճիկները։ Մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ, կշիռ, դրամներ։ Դրոշմատուրք, բնակարանի հարկ, վարձատրութիւն նօտարների, դատական պրիստաւների, երդ.-հաւատարժատարների։ Պօստ և հեռագիր. իջևայողական գանձարաններ։ Զինւորագրական օրէնքներ, նորակոչ զինւորների չափը։ Անցագիր և բողոքելու ատեաններ։ Հաբուստ բժշկարան, առողջապահական խորհուրդներ։ Ինչից ստեղծվեց աշխարհը, Երբ կը վերջանայ աշխարհը։ Հայկական հարցը 1878 թ.ի Բերլինի վեհաժողովը, Սանստեֆանօի 16-րդ և Բերլինի 61-րդ յօդուածները. ինչ շահեցինք Եւրօպայից։ Անիի գաղթականութիւնը դէպի Լեհաստան, Նիկոլ Թորոսովիչ, 300,000 հայերի վիճակը և վախճանը Լեհաստանում. Անիի նոր պեղումները—պրոֆ. Մառ։ Ճորտերի ազատութիւնը Ռուսաստանում, գիւղացիական շարժումներ։ Զօրքը Անգլիայում։ Կենսագրութիւններ՝ Խրիմեան Հայրիկ, Մինաս Զերազ, Ս. Նազարեան—«Հիսսարպայլի 50-ամեակը։ Ճանապարհորդական—երկաթուղի, շոգենաւ, կառքեր։ Երգարան—Քուչակի և Հաֆըզի սիրոյ երգերից։ Հանելուկներ, բեղուններ և զուարճալի վիճակարան։
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր, աֆորիզմներ, հարուստ ժամանակագրութիւն և բանաստեղծական փոքրիկ հատուածներ. եկեղ. և ազգային ծօների պատմական բացատրութիւններ, զանազան հեթանոսական սովորութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ, առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, եապօնացիների, հընդիկների, հապէշների և քրդերի կեանքից զուարճալի պատմութիւններ, պատմական նըշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և եւրօպական կեանքից, հետաքրքիր թեր և տեղեկութիւններ, ինչպէս են ծախսվում հասարակական գումարները, զինւորական ոյժ և պատերազմական ծախքեր։ Հողը Ռուսաստանում, ում ձեռին են հողերը։ Ազգային քնար—նորագոյն բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր—սիրոյ երգեր Քուչակի և Հաֆըզի, հետաքրքիր տեղեկութիւններ բուսական և կենդանական աշխարհից, թռչունների և կենդանիների հետաքրքիր կողմերը, կենսագրութիւններ, զուարճալի դէպքեր մեր ծմարգկանց կեանքից։ Ժողովրդական առածներ, երգեր, լէլէներ, զուարճալի ՆՈՐ ԱՌԱԿՆԵՐ, տընտեսային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, խոհարարական խորհուրդներ, հանելուկներ, շուտասելուկներ, վիճակներ և այլ զուարճալի տեղեկութիւններ։
Տախակը բազմաթիւ գոյներով, լիտոգրաֆիայում պատրաստված մի շքեղ նկար է՝ «Մանուկ Հայաստան», հայրենի աւերակների մէջ նստած մայրը ցոյց է տալիս մանուկին դէպի Մասիսը, ապագայ ճառագայթող արշալոյսը, միւս կողմից Շիրակի տշխատաւոր հայ կնոջ ոգին՝ տարվայ բերքը—հասկեր է ձօնում։
Գինը՝ պատկինը— 40 կոպ., ծոցինը—15 կոպ., գումարով գնողներին զեղչ։
Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“, Карапету Апинянцъ. Արտասահմանից—Alexandropol, Karapet Apinian (Caucase)
Ալէքսանդրօպօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով։ (ու. և.) 4—8

Բացված է բաժանորդագրութիւն 1908 թ. (առաջին տարի)
ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ
Գրական, քաղաքական եւ հասարակական պատկերազարդ շաբաթաթերթի
(Ազատամիտ անկուսակցական օրգան)
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան . . . . . 4 ռուբլի
Արտասահման . . . . . 5 ռուբլի
Առանձին՝ հաժարը ամեն տեղ 10 կ.
Տարեկան բաժանորդ գրվողները կը ստանան ՁՐԻ ՊՐԷՄԻԱ
ՆԱԺԻՇՏԻ ՕՐԱԳԻՐԸ
Օգտաւ Միրբօյի յայտնի և հետաքրքիր գրուածքը, շքեղ հրատարակութիւն,
ԱՌԱՆՁԻՆ ԱՐԺԷ 1 Ր. 50 Կ.
«Նոր-Աշխարհում» կը տպագրվեն յայտնի փիլիսոփաների գրուածքները և կենսագրութիւնները՝ Նիցշէի, Հեգելի, Սպինօզայի, Շոպենհաուէրի, Պրուսօնի, Բակունինի, Տոլստոյի, Կրապօտկինի և ուրիշների։
Յունվարի սկզբից կը տպագրվի իտալացի յայտնի հրապարակախօս և երգիծաբան ԳՕԼԻՍԱՐԴՕՅԻ
«ԱՐԿԱԾՆԵՐ ԼՈՒՄՆԻ ՎՐԱ» (ֆանտազիան)
«Նոր-Աշխարհում» կը տպագրվեն գեղարուեստական նկարներ, հասարակական գործիչների պատկերներ և ժամանակարներ։
«Նոր-Աշխարհին» աշխատակցելու են որոշ ուղղութեան գրողներ։
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція журнала «Норъ-Ашхаръ» Водоподъемная ул. № 8 (Чугуретъ).
Խմբագիր-հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ՃԷՊԻՅԵԱՆ
(ու. կ.) 2—4

*) Տես «Մշակ» № 183.

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.